



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

616.91  
Բ - 91

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹՔԻՆ Գ. Ա.

№ 1.

3210

ՎԱՐԱԿԻ? ՃԻԿԱՆ ԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՔԻՆ

ԹՓ. ԱՐՏ. ԲԱԼԻԳՈՎԱՆԻ

Ս. ՊԵՏԵՐԲՈՂԻՐՔ  
Ի. Ն. ԱԿՈՐԻԿՈՎԻ Տպարան

1891.

*Անդրադա*

616.91

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. Ա.

R-91 Ա. Հ.

№ 1.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՎԱՐԱԿԻՉ ՅԻՒԱՆ-  
ԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ:

34452  
35950

ԱՇԽԱՏԱՍՈՒՐԵՑ

ԲԺ. ԱՐՏ. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ



2002

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐՓ.  
ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՈՐՈԽՈՎԾԻ  
1891.



2010

16551

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԳՈՒ-  
ԹԻՒՆԵՐԻ ԴԼԻ:

Առաջաբան.

Մէր գիւղելում ամենայն տարի պա-  
տահումն բազմաթիւ վարակիչ հիւան-  
դութիւններ, որոնց զոհ են գնում շատ  
մարդիկ, գլխաւորապէս երեխաներ: Եյդ  
հիւանդութիւնների տարածուելու դրւ-  
խաւոր պատճառն այն է, որ մեր ժո-  
ղովուրդը չըգիտէ զրանց առաջն առնել  
կամ առաջն է առնում այն ժամանակ՝  
երբ արդէն ուշ է: Ասենք թէ մէկ ե-  
րեխայ վարակում է բդացաւով. եթէ  
նրան իսկոյն հեռացնեն առողջներից և  
պահեն առանձին՝ այն ժամանակ հիւան-  
դութիւնը հէնց այդ մէկով էլ կանցնի,  
բայց մեզ մօտ այդպէս չեն առում: Մէ-

Дозволено цензурою. С.-Петербургъ, 18 марта 1891 года.

Tipografiia I. N. Skorokhodova (Nadezhinskaya, 43).

կը հիւանդանում է, նրա հետ խառնը-  
ում են առողջներ և նրանք էլ հիւան-  
դանում և ահա պյաղիսով՝ վարակւում  
է ողջ գիւղը։ Այս պատճառով ևս ու-  
զում եմ խօսել մի քանի գիւսաւոր վա-  
րակիչ հիւանդութիւնների մասին, որ գո-  
նէ մինչև բժշկի գալը ծնողները կարո-  
ղանային օգնել հիւանդին, որովհետեւ  
պատահում է շատ անգամ որ բժիշկը  
հեռուէ բնակւում գիւղեց կամ գիւղում  
բոլորին բժշկ էլ չըկայ։ Մարդ սար-  
սափում է, երբ իմանում է, որ հարիւ-  
րից վաթսուն-եօթանասուն հոգի զոհ են  
գնում վարակիչ հիւանդութիւններին և  
որի գիւսաւոր պատճառն այնէ, որ մեր ժո-  
ղովուրդը չոգիտէ այդ հիւանդութիւն-  
ների առաջն առնելը կամ դիմում է  
այնպիսիններին, որոնք ոչ թէ բժշկ,  
այլ անկիրթ, տպէտ և բոլորովին ա-  
նուսում մարդիկ են...

### Ա. Բարեգործական:

5 Մարտի 1890 թ.  
Ա. Գևորգյանը.

### Ա. Բարեգործական (Դիմումներ)։

Այս հիւանդութիւնը յայտնի էր  
մարդկանց հին ժամանակները։ Բա-  
ցաւը պյաղիսի մի հիւանդութիւն է.  
հիւանդի բուգն ուռչում է, մաղասային  
թաղանթի վրա և քթի մէջ գուրս են  
գալիս մուգ-մոխրագուն փառեր, հիւան-  
դը ջերմում է և թուլանում։ Հիմա ա-  
սեմ թէ ինչ բան է այդ մաղասային թա-  
ղանթը և այն նշանման խուլերը, որոնց  
վրա նստած են դիֆտերիտի փառերը։  
Եթէ ձեր մատը մայնէք հիւանդի բե-  
րանը և նրանով տանէք ու բերէք՝ թշի  
ներսի մասը տափակ, թաց ու լպրծուն  
է, պատճառն այնէ, որ բուգը, քթի և  
թշի ներքին մասերը ծածկուած են մի  
տեսակ թափանցիկ թաղանթով, որ-  
տեղեց գուրս են գալիս խորխ և մա-  
ղաս և այդ պատճառով նրան կոչում  
են ճաղապային նաղանը (слизистая оболочка):

Նթէ մէկի բերանը բաց անէք, արտասանել տաք և և նայէք նրա բուգը,  
կը տեսնէք, որ լեզուակի ետևից ու նրա  
երկու կողմից երեռւմ են նշի նման փոքր  
խուլեր, որ նշնպէս ծածկուած են մա-  
ղասային թաղանթով և շատ նմանու-  
թիւն ունեն նշի հետ դրա համար դրանք  
կոչում են նշանան լու-լու:

Դիմականից պատճառերը: Հիմա ար-  
դէն փաստ է, որ դիմականի պիտառը  
պատճառը մի տեսակ ամէնամանը կին-  
դանիներ են, որոնց միայն խոշորացու-  
ցով կարելի է տեսնել. սրանք կոչում  
են միջօնէնէր: Դիմականի պատճա-  
սարակ հիւանդանում են երեխաները:  
Ըստ շատ անգամ հիւանդանում են և  
երիտասարդ մարդիկ: Դիմականի պա-  
տճառը է պիտառապէս ցուրտ և խո-  
նաւ ժամանակները, որովհետեւ այդ ժա-  
մանակն է լինում առհասարակ հար-  
բուխ հիւանդութիւնը, իսկ յայտնի է, որ  
վարակիչ թոյնը կազում է հիւանդացած  
տեղելին և հարբուխով հիւանդացած  
բգին հեշտութիւնով կազում է դիմա-  
կանի թոյնը:

Դիմականի նշանները: Նթէ մէկը  
վարակուեցաւ դիմականի պիտառը, երկք-չորս  
օր, մինչեւ անգամ երկու շաբաթ ոչ մի  
բանով չէ կարելի ստուգել հիւանդու-  
թիւնը: Այդ ժամանակը կոչում է  
նախունի ժամանակ:

Դորանից յետոյ սկսւումէ սաստիկ  
ջերմ, հիւանդը անուշք է, գելն է տա-  
լիս, թշերը կարմրում են, զըթունք-  
ները չորանում, ձաքձքում են, աչքերը  
փայլում են: Նթէ այս ժամանակ նայէք  
հիւանդի կոկորդին՝ կրտեսնէք, որ նրա  
միջի մուգ-կարմիր նշանման խուլերը  
մեծացել ուռել են, համարեա ծածկում  
են կոկորդի անցքը. այդ խուլերն ու  
մաղասային թաղանթը ծածկուած են  
դիմականի պատճառը նշնպէս ուռ-  
չում են. կուլ տալ նա դժուարանում  
է, նրա ձայնը կտրում է, կարծես  
քթումնէ խօսում, ախորժակը կորցնում  
է, բայց խմել սաստիկ ուզումէ: Նթէ  
այս ժամանակ հիւանդութիւնը չըսաստ-  
կացաւ. առողջանալ շուտով կարելի է,  
բայց միշտ այդպէս չէ լինում: Ճերմը քա-

Նի գնում՝ սաստկանում է, խուլերն ուռում են, այնպէս որ կարող են մինչև անգամ խեղդել հիւանդին։ Ըստ անգամ պատահում է այսպէս. հիւանդը լաւ է զգում իրան, բայց մէկ էլ տեսնես՝ յանկարծնրա դրութիւնը փոխում է դէպի վատը և պատահում է մինչև անգամ, որ մեռնումէ։ Այ դիմումների մի սաստիկ տեսակը, որը կոչւումէ ինո՞ւ ո՞չո՞ւ էրիս, սա այսպէս է լինում։ Կոկորդի մէջ նստած են յինում սաստիկ հոտած փառեր, այնպէս որ հիւանդի մօտ դժուար է նստել. նրաքթից կաթում է հոտած ու փտած հեղուկ, շրթունքները ձաքճում են, ձաքճուած տեղերից հոսում է արիւն, լիզուն չորանում է և նրա ծայրերը կարմրում են, հիւանդը մոռացուած դրութեան մէջ է լինում։ Նրա ձեռքերն ու ոտները սառն են, միշտ փորը լուծում է, այնպէս որ վերջիվերջը հիւանդը մեռնում է։

Փառերը կոկորդի մէջ լինում են և ուրիշ հիւանդութիւնների ժամանակ, և ըստ սխալուելու համար պէտք է գիտենալ որ բգացաւի փառերը լինում են

մուգ-մոխրագուն կամ ցեխագուն, բայց ուրիշ հիւանդութիւնների մէջ նրանք սպիտակ կամ դեղին են լինում։ Բայցի գորանից՝ եթէ փետուրով առնես բգացաւի փառը, նա դժուարութիւնով է առնւում, իսկ եթէ պոկես, այն ժամանակ տեղը մնում է փոքրիկ վէրք, որտեղից հոսում է արիւն, իսկ ուրիշ կոկորդային հիւանդութիւնների ժամանակ հեշտութիւնով կարելի է վերցնել փառ։ Հիւանդի բուգը նայելու ժամանակ պէտք է զգուշ մնար, որ հիւանդը գուրս ըշհազայ նայողի երեսին։ Պատահում է երբեմն՝ որ հիւանդի փոքրը լուծում է և մինչև անգամ նքացնում (արիւնովէ լուծում), փոքր ուռչում, յաւում է, ցաւում է նոյնպէս լեարդը, փայծաղը և սիրտը, այնպէս որ ձեռքերը, երեսնու ոտները ուռչում են և շատ անգամ էլ պատահում է կաթուած—ոչ միայն կոկորդի, այլ և ձեռքերի ու ոտների, — հիւանդը դժուարութիւնով է շնչում ու կուլ տալիս, ձեռքերն ու ոտները նրան այլ չեն հնազանդում։ Այդ կաթուածը երևան է զալիս կամաց-

կամաց, առհասարակ՝ դիֆտերիտի փաս-  
ուերիկորչելուց երկք շաբաթ յետոյ: Ի՞աղ-  
դաւորապէս՝ դիֆտերիտի կաթուածը  
երկար չէ տեսում, շատ սակաւ անգամ  
միայն տեսումէ մի քանի ամիս: Հիմա  
հարց է, թէ ինչ պէտք է անել դիֆտե-  
րիտի ժամանակ, ի՞նչ պէտք է անէ վա-  
րակուածը, ի՞նչ պէտք է անէ դեռ ևս  
ըսվարակուածը:

Հէնց որ երեան է գալիս դիֆտե-  
րիտը, իսկոյն պէտք է հիւանդին բա-  
ժանել առողջներից, որովհետեւ դիֆ-  
տերիտի թցնը կարող է անցնել պա-  
տերին և այլ առարկաներին, մինչև ան-  
գամ օդին, այնպէս որ՝ այդ ժամանակ ոչ  
միայն հիւանդն է վարակիչ այլ և սե-  
նհակը: Մինչև անգամ հիւանդի առող-  
ջանալուց յետոյ՝ չի կարելի իսկոյն նրա  
սենհակը մտնել մինչև որ նա չըմաք-  
րուի, չըլուացուի, քամու չը արուի: Փոքր  
ինչ յետոյ այստեղ զբուած կը լինի թէ  
ինչպէս պէտք է մաքրել բնակարանը որ  
նա այլ ևս վարակիչ չըլինի: Առաջուց  
պէտք է ասեմ, որ չի կարելի անպատ-  
ճառ առողջացնել հիւանդին, պատա-  
հումէ, որ տասը հիւանդից մեռնումէ

մէկը, պատահումէ մինչև անգամ, որ մեռ-  
նումէն եօթը-ութը: Կոչ և իցէ՝ երբ իմա-  
ցաք, որ ձեր հիւանդը դիֆտերիտ ունի,  
իսկոյն նրան պէտք է առանձին սենհա-  
կում պառկեցնէք (այնտեղ պէտք է պառ-  
կեցնէք և բոլոր դիֆտերիտով վարա-  
կուածներին): Յետոյ կոկորդը մաք-  
րելու համար՝ պէտք է գնէք նրա վրա  
տաք խմորացրած կտաւատի սերմ կամ  
շաղախած մանանեխ: Այն երեխանե-  
րին, որոնք կարող են մաքրել կոկորդը,  
պէտք է տալ ողողելու համար մի տե-  
սակ աղ, որ ծախւումէ դեղատներում  
և որը կոչւումէ բերքալետան աղ (ներ-  
տոլետօվա սոլ), կարելի է տալ և բորակ  
(բորա): Եյս գեղը պէտք է պատրաստել  
այսպէս. պէտք է մէկ թէյի գդալ բերտօ-  
լետեան աղ կամ բուրա խառնել մի  
մեծ թէյի բաժակով ջրի մէջ և դրա-  
նով ողողել օրը տասը-տասերկու ան-  
գամ կոկորդը: Ի՞այց այն շատ փոքր  
երեխաները, որոնք չեն կարող ողողել  
նրանց համար պէտք է գեղը պատրաս-  
տել այսպէս, առնել կէս թէյի գդալ բեր-  
տօլետեան աղ և խառնել երկու թէյի

բաժակ ջրի մէջ, գնել մէջը մի կտոր շաքար և տալ երեխային խմելու ամէն մի երկու ժամից յետոյ մի թէյի գդալ բայց լաւ կրլինի առաջուց խմացնէք երեխային կաթ և յետոյ գեղը, որովհետեւ անօթի փորով բերտոլետեան աղը վնասակար է։ Այս եօթ տարեկան երեխաներին այսպիսի գեղ կարելի է տալ. առնել մի թէյի բաժակ ջուր և մէջը կաթեցնել տասը կաթիլ կարճով և զրանով ողողել բուգը, բայց չըկուլ տալ գեղը։ Լաւէ նոյնպէս մի պղնձով եռացրած տաք ջրի մէջ գնել մէկ գդալ անոնքար (բևեկնւց իւղ) և այդ պղնձից գոլորշին (բուղը) շնչել։ Արելի նոյնպէս անել այսպէս սաստիկ տաքացնել աղիւսը և նրա վրա ածել մի թէյի բաժակով ջրի հետ խառնուած մէկ թէյի գդալ կարբոլկա կամ սկիպիդար, աղիւսից բարձրանումէ գոլորշի որը սպանում, ոչընչացնումէ դիֆտակիտի թոյնը։

Տաքութիւնի դէմ կարելի է այսպիսի գեղ տալ առնել մէկ թէյի բաժակ եռացրած և յետոյ սառեցրած ջուր, մէջը խառնել կէս մսխալ քինաքինա (հինա)

և տալ երկու ժամը մէկ անգամ՝ փոքրիկ երեխաներին թէյի գդալով, իսկ մէջ երեխաներին՝ սեղանի գդալով (փոքր երեխաների համար գեղի մէջ հարկաւոր է խառնել մի կտոր շաքար)։ Եյդ ժամանակ հիւանդին կարելի է տալ նուան կամ ալիբուխարու շաքարախառն քամուածք (նաշարաբ)։ Առհասարակ պէտք է աշխատել հիւանդին սննդաբար և հեշտ մարսելու և ջրալի կերակուրներ տալ խմացնել եփած կաթ կամ մսաջուր (բուլիօն)։ Բընձի կամ բղորուի ապուր (շօրվա) և կոշտ բաներ չի կարելի ուտեցնել որովհետեւ բուգը ուռած է և ցաւումէ։ Հիւանդի գործածական ամէն բանը՝ ամանը, գդալը և այն միշտ պէտք է առանձին լինի, որ ուրիշներին չը վարակի. հիւանդի սննեակը ժամանակ առ ժամանակ պէտք է քամու տալ (սննեակի օղը նորոգել) և առհասարակ շատ չըտաքացնել։ Յայտնի բան է, դիֆտակիտի ծանր դէպերում պէտք է բժիշկ կանչել որովհետեւ դիֆտակիտը բացի այս տեսակից ունի և զանազան բարդութիւններ։

Բ. ՞Օաղիկ.

՞Օաղիկ հիւանդութիւնը յայտնի է շատ հին ժամանակներից: Աան մի քանի փաստեր, որոնցով հաստատում է, որ այդ սարսափելի հիւանդութիւնը տարածուած էր մինչև անգամ՝ Քրիստոսի ծննդից հազար տարի առաջ: Եռաջ ծաղկից շատ մարդիկ էին մեռնում, բայց հիմա՝ երբ արդէն տարածուել է ծաղկի պատուաստելու սովորութիւնը՝ համարեա ոչ ոք չէ մեռնում այդ հիւանդութիւնից: ՞Օաղկով կարող է վարակուել ամենայն մարդ, բայց հիմա շատ քչերն են վարակում, որովհետեւ ժողովուրդը հասկացել է ծաղկի կտրելու օգուտը:

Կատերը ըզդիտեն, որ ամէն մարդիրա կեանքում պարտաւոր է ծաղկը երկու անգամ կտրել տալ, մէկը երեխայ ժամանակ, մէկ էլ մօտաւորապէս տասը տարի անցնելուց յետը: ՞Օաղկի ամէնասարսափելի տեսակը ու ժաղկի կոչուածն է: Ինչպէս փաստյայտնի է, որ սև ծաղկով շատ հեշտութիւնով վարակում են

հարբեցող և զանազան ցաւերից թուլացած մարդիկ: Աև ծաղիկն սկսւում է այսպէս:

Հիւանդի մարմնի վրա դուրս է գալիս բազմաթիւ մուգ-կարմիր բծեր լուի կծած տեղերի պէս և կապուտուածքներ, ինչպէս մի բանին խփես քո մի տեղը և նա կապտի: Այդ ժամանակ հիւանդի քթից, կոկորդից և յետանցքից հոսում է արիւն. հիւանդը սաստիկ թուլանում է և թուլութիւնից էլ մեռնում:

՞Օաղկով կարող է առհասարակ հիւանդանալ թէ վաթսուն տարեկան ծերը և թէ մի ամսական երեխան, պատահումէ, որ վարակուած յղի մայրերից ծնուել են և վարակուած երեխաներ, նշանակումէ երեխան արդէն վարակուել էր մօր արգանդում: Պատահել է օրինակ Ամերիկայի և Եւստրալիայի վայրենի ցեղերի մէջ, երբ ամբողջ մի ցեղ մի քանի հազար մարդկանցից ոչընչացել է նորա մէջ ծաղկի սաստիկ տարածուելուց:

՞Օաղկի գլխաւոր նշանները: Հիւանդու-

թիւնն սկսումէ սաստիկ գողով և ամենաբարձր աստիճանին հասնող (40°) տաքութիւնով, սկսումէ զիլացաւ, հիւանդի զլուխը պառուտէ գալիս, մէջքը սաստիկ ցաւումէ. միջին թւով երեք օր անցնելուց յետոյ՝ երեսին և ապա բոլոր մարմինի վրա գուրս են տալիս մուգ-կարմրագուն բծեր, որոնք յետոյ փոխումնեն սպիտակ մէջ տեղը փու ընկած բշտիկների. ապա ծաղկի հասնելու ժամանակ (ծաղկի հասնելը ծանր գէպքերում տեսումէ 6 օր, իսկ թեթև դէպքերում՝ 5 օր) այդ սպիտակ բշտիկները լցումնեն թարախով։

**Վերջապէս** այդ բշտիկները չորանում են և թափումնեն թեփի պէս։ **Օանր գէպքերում** ծաղկին ընկնումէ աչքի և ականջի մէջ և դրանից կարողէ հիւանդը կուրանալ կամ խլանալ։


**Թաէ** ինչպէս պէտք է բժշկել ծաղիկ ունեցած հիւանդին՝ դրան մի խօսքով կարելի է պատասխանել այսինքն՝ ժառներ իրեւ եր ժամանակներ, բայց եթէ դժբաղդաբար երեխայի ծաղիկը չեն կըտրել մեղքը նրա հօր, մօր կամ մօտիկ

ազգականների վրա պէտք է ընկնի, ուրովհետեւ ծաղկից հիւանդը կարողէ և մեռնել։

**Բայց** ինչ և իցէ, Աստուած մի արացէ եթէ մէկը հիւանդանայ, պէտք է նրան խկոյն առանձնացնել և տանել մաքուր սենեակ, ուտեցնել հեշտ մարսելու կերակուրներ, այսինքն կաթ, մածուն, թերխաշ ձու, հաւի մսի ապուր (բուլիօն), եթէ զլուխը ցաւումէ զլիխին դնել սառը ջրով թրջած քաթան (ամէն մի երկու բոպէից յետոյ փոխել) կամ եղան փամփուշտում (թուլուխ) զրած սառուց իսկ եթէ փորը կապածէ, լուծելու համար տալ այսպիսի գեղ. առնել երեք թէյի գդալ ձիթենու (զէյթունի), կտաւատի կամ շնաձանձի (զէնագերչակի) ձէթ ու խառնել երկու թէյի գդալ մեղքի հետ ու անօթի խմացնել։

**Բայց** Աստուած մի արացէ եթէ հիւանդից արիւն թողնեք, դրանից հիւանդը կարողէ մեռնել (առհասարակ խորհուրդ եմ տալիս առանց բժշկի խորհրդի երբէք արիւն ըթողնել):

**Երբ ծաղկի խոցերը սկսումնեն չորա-**



նալ և թափուել այն ժամանակ հիւանդին ըղացնել գու (ոչ շատ տաք) ջրով։ Տաքութիւնի դէմ տալ այսպիսի դիզ մէկ բաժակ հիած ու սառեցրած ջրի մէջ խառնել կէս մսխալ քինաքինա և մէկ թէյի գդալ կիտօնի հիւթ (լիմնի ջուր), մէծերին տալ օրը չորս հինգ անգամ սեղանի (սպասի) գդալով, իսկ փոքրերին մի թէյի գդալով՝ օրը երեք անգամ (փոքրերի համար լսու է լիմնի ջրի հետ միասին խառնել մի փոքր կտոր շաքար)։

### Գ. Խոնէ նշանակում ծառին էաբելը.

‘Օաղկով չըհիւանդանալու ամէնից լսու և հաւատարիմ գեղն է ծառին էաբելը։ Արդէն հին ժամանակներից յայտնի էր, որ եթէ մէկը հիւանդանում է ծաղիկով, նրան երկրորդ անգամ այլ չէ լնինում, սրա համար՝ եթէ մէկը հիւանդանում էր ծաղիկով՝ առողջ մարդիկ հագնումէին հիւանդի շորելը, ի հարկէ նրանք աշխատումէին հագնել թեթև կերպով հիւանդացածների շորելը և այս բանի շնորհիւ՝ վարակուած-

ները հեշտ կերպով էին հանում ծաղիկը։ Տեսնում էին, որ թէպէտ այդ կերպով ծաղիկ կտրելը շատերին օգնումէ, բայց շատերը մեռնում էն ինչպէս մէկը միւսից վարակուածներ,—հասկանալի բան է, որ այդտեսակ ծաղիկ կտրելը հաւասար է վարակուելուն։

Եյդպատճառով մարդիկ սկսան վնասուել մի ուրիշ միջոց ծաղիկը կտրելու համար։ Այդ միջոցն եղաւ կովի ծաղիկի պատուաստելը։ Տեսան, որ կովի ծծի պատուկի վրա դուրս է գալիս ծաղիկը, որ շատ նման է այն ծաղկին, որ լինում է մարդու մարմինի վրա, միայն միքիչ զանազանութիւն ունի, այդ այն է, որ կովի ծաղիկը լինում է միայն նրա պատուկի վրա և աւել չէ տարածում։ Եթէ պատուաստես կովի ծաղիկը մարդու, այսինքն՝ առնես ասեղի ծաղրով կովի ծաղիկց մի քիչ թարախ և ծակես այն ասեղով մարդու կաշին, այդ տեսակ պատուաստած (կտրած) ծաղիկը չի տարածում մարդու մարմինի վրա, այլ մնում է այնտեղ, որտեղ ծակած է ասեղով։

Յիտոյ այս էլ իմացան, որ եթէ մար-

\*

դու ծաղիկը պատուաստեն կովին, այն ժամանակ կովը կը հիւանդանայ իրան ծաղիով, այսինքն՝ ծաղիկը դուրս կը տայ միայն ծծերին, այսպիսով մարդու ծաղկի ուժը թուլանումէ կովի վրա: Առ եթէ մարդուց կովին ընկած ծաղիկը նորից պատուաստուի մարդուն՝ այն ժամանակ մարդը հիւանդանումէ կովի ծաղիով, այսինքն՝ ծաղիկը դուրս է տալիս միայն այն տեղը, որտեղ կտրած է այդ ծաղիկը, ել հեռու չի տարածւում:

Սրանից դուրս է գալիս, առաջին՝ որ մարդու ու կովի ծաղիկը շատ նման են և երկրորդ՝ որ մնալուց կովին՝ պատուաստած ծաղիկը թուլանումէ: Ահա այդ կովի կամ մարդկային թուլացած ծաղիկը սկսեցին պատուաստել մարդկանց, և այսպիսով ազատել հաղարաւորներին մահից: Այս բանի առաջին գտնողն էր անդղեացի բժիշկ Թաններ, որի համար և նրան կոչումեն մարդկութեան բարերար: Այս բանը պատահելէ հարիւր տարի առաջ: Թաններ ահա թէ ինչպէս իմացաւ: Նորա մօտ եկաւ մի ուրիշ ցաւով հիւանդացած դիւղացի կնիկ և

խօսակցութեան ժամանակ ասաց, որ նա էլ չի վարակուի ծաղիկով, որովհետեւնա հանելէ կովի ծաղիկը, իսկ կովի ծաղիով նա վարակուել է կթելու ժամանակ: Թաններ ուշադրութիւն գարձրեց կնկայ ասած խօսքերին ու սկսեց փորձեր անել և ուսումնասիրել այդ բանը: Միքանի տարուց յետոյ, երբ արդէն շատ փաստեր ունէր ձեռքին, Թաններ զբեց և յայտնեց բոլոր աշխարհին ծաղիկ կրտրելու մասին: Հիմա արդէն ամէնքին յայտնի է ծաղիկի կարելու օգուտը, մարդ յիմար պէտք է լինի, որ ծաղիկ կարելու գէմ խօսի:

Վամէն մարդ պարտաւոր է իրան ժամանակին բերել երեխային բժշկի մօտ, որ նա կարէ երեխայի ծաղիկը:

Ծաղիկ կտրելը ապահովեցնում է մարդուն իսկական ծաղիկով վարակուելուց, այդ է պատճառը, որ բժիշկներն ու հիւանդին մտիկ տուողները չեն վարակուում եթէ նրանց ծաղիկը կտրած է, նոյնպէս՝ եթէ մի գերդաստանի մէջ հիւանդանումէ մէկը, նրանից վարակումեն միայն նրանք, որոնց ծաղիկը

չէ կտրուած կամ ծաղիկ կտրելուց տառ-  
սը-տասերկու տարի է անցել ահա սրա  
համար հարկաւոր է գիտենալ որ ծաղիկ  
կտրելը կորցնումէ իր ուժը 10—12 տա-  
րուց յետ և սրա համար ամէն մարդ  
իր կեանքում երկու անգամ պարտա-  
ւոր է ծաղիկը կտրել, մէկը երեխայ ժա-  
մանակ և մէկ էլ տասը տարի յետոյ:  
‘Օաղիկ կտրել հարկաւոր է նոյնպէս այն  
ժամանակ, երբ քաղաքում կամ զիւղում  
սաստիկ տարածուած է այդ հիւանդու-  
թիւնը, ընայելով նրան, որ արդէն ծա-  
ղիկը կտրած է:’ Ի այց շատ անգամ պա-  
տահում է, որ դժուար է լինում՝ գտնել  
ծաղիկով հիւանդացած կով կամ հորթ,  
կամ ծաղիկը նոր կտրած երեխայ, որից  
կարեի լինէր պատուաստել ուրիշներին.  
պէտք է անպատճառ համոզուած լինել,  
որ կովը, հորթը կամ երեխան, որոն-  
ցից պատուաստումէ ծաղիկը, ուրիշ  
հիւանդութիւն չունեն: Այդ պատճա-  
ռով մեծ քաղաքներում կան ծաղիկ պա-  
տուաստելու հիմարկութիւններ, որ-  
տեղ պատրաստումէն թարմ ծաղիկ

հիւթը և ցանկացողներին ուղարկում  
են ապակէ փոքրիկ ամաններով:  
Այսպիսի ամաններ կարելի է գտնել  
ամեն տեղ (գեղատներում և այլն): Երբ  
ուղում են ծաղիկ կտրել, մեծ զգուշու-  
թիւնով բացեն անում այդ ամանը, վերց-  
նում են նրանից ինչքան որ պէտք է  
ծաղիկի հիւթը և մնացածը կրկն փա-  
կում են ամուլ՝ զմուռով և պահում  
են սառը տեղում: ‘Օաղիկ կտրելու ա-  
սեղով կամ դանակով ծակում են երեք  
տեղ միմեանցից մէկ ու կէս մատ հե-  
ռաւորութիւնով կռան (թեի) վլա:’ Օա-  
կիլ հարկաւոր է վերնամաշկի տակ ոչ  
ուղղահայեաց կերպով այլ թեք (ծու-  
ռը): Այդ բանը անել շատ հեշտ է, բայց  
ըստէտք է մոռանալ մի բան, որը քան-  
դում է շատերի տունը, առաջին՝ որ  
ծաղիկ կտրող ասեղը կամ դանակը  
պէտք է լինեն մաքուր, նրանց հարկա-  
ւոր է լաւ լուանալ կարբօլի ջրի մէջ  
(առնել երկու գդալ կարբօլկա և ածել  
մէկ բաժակ ջրի մէջ) կամ այդ գոր-  
ծիքները պահել 5—10 րոպէ թունդ  
օղու կամ սպիրտի մէջ. երկրորդ՝ այն

տեղը, ուր ուղում են կարել ծաղիկը՝  
պէտք է լուսնալ փոքր ինչ տաք ջրով.  
երրորդ՝ գլխաւորը՝ եթէ ծաղիկը առ-  
նում են երեխայից, երեխան պէտք է  
լինի առողջ, նշնապէս՝ որ նրա հայրն  
ու մայրը վարակուած ըլինին սիֆիլի-  
սով (աթեշակ, սրխըրմա, քիֆտ).—ի՞նչ-  
քան խեղճ երեխաներ վարակում են այդ  
սարսափելի ցաւով՝ անմաքրութիւնից:  
Այժմ արիւնի հիւանդութիւն է, դո-  
րանից մարդու մազերը թափւում են,  
քիթը շատ անգամ ընկնում է, ոսկոր-  
ները փթում են, և վերջապէս մարդը  
մեռնում է:

Երեխայի ծաղիկ կարելու ամենա-  
յարմար ժամանակը նրա վեց ամսա-  
կան լինելու ժամանակն է, բայց պէտք  
է աշխատել՝ երեխայի ատամներ դուրս  
դալու ժամանակը ըլ կարել: Ի՞այց երբ  
գիւղում կամ քաղաքում տարածուած  
է ծաղիկը, ըսպէտք է նայել երեխայի թու-  
լութեան, այլ անպատճառ կարել: Օ՞ա-  
ղիկ կարելու առաջին երեք օրը երե-  
խային չի կարելի լողացնել: Երբ ծաղիկ  
կարած տեղերի շուրջը կաշին կարմրում

է և ուռչում է ու ցաւում, լաւ կը  
լինի այդ ժամանակ կարած տեղը քսել  
քափուր (կամֆօրա) կամ զէյթունի  
ձէթ: Երբ խոցերը սկսում են ըրանալ  
և տեղերը քոր գալ որպէս զի երեխան  
ըքորի՝ պէտք է մաքուր շորով կրտ-  
րած տեղը կապել ոչ ամուր: Շատ քիչ  
անգամ պատահում է, որ կարած տե-  
ղերի շուրջը սաստիկ կարմրում, ուռ-  
չում է և հիւանդին տաքութիւն է տա-  
լիս, այդ ժամանակ պէտք է կարմրած  
տեղը քսել այս մշլամը. առնել կէս  
զլվանքա խողի ճարապ (իւղ), հետո  
խառնել 12 մոխալ սկիպիդար, կամ կէս  
թէյի գդալ քափուր՝ տրորելով երկու  
սեղանի գդալ իւղի մէջ:

Խմելու համար տալ քինաքինա (պատ-  
րաստել այնպէս, ինչպէս առաջուց այս-  
տեղ գրել եմ), եթէ երեխան թոյլէ, տալ  
նրան մէկ-երկու գդալ կարմիր գինի:  
Լինում է այնպէս, որ ծաղիկ կարելը  
չի ներգործում, այսինքն 4—6 օրից յե-  
տոյ ծաղիկը չի գուրս տալիս, այդ ժա-  
մանակ ծաղիկը պէտք է կարել նորից  
(այդ պատահում է նրանից, որ վերցրած

ծաղկի հիւթը փչացածէ, վատէ, կամ  
լաւ չեն կարողացել կտրել), եթէ էլի  
չի ներգործում, սպասել մի քիչ և յե-  
տոյ նորից կտրել այսպիսով երկու ե-  
րեք անգամ փորձելուց յետոյ եթէ էլի չի  
ներգործում, նշանակում է մարդու մար-  
մնը ծաղկի չի ընդունում, և նա կա-  
րող է այլ ևս ըստվիճակի խսկական ծա-  
ղկից, բայց այս բանը լինում է շատ  
հազիւ:

#### Դ. Կարճուկ.

Կարմրուկը յայտնի էր և հին ժա-  
մանակները, բայց առաջ նրան խառ-  
նում էին քութէշի կամ ծաղկի հետ.  
Հիմա մօտ երկու հարիւր տարի կը լի-  
նի, ինչոր մարդիկ սկսել են ճանաչել  
կարմրուկը: Ըստ հազիւ կը պատահի,  
որ մարդ չը հիւանդանոյ կարմրուկով,  
և մենք համարեա ամէնքս ունեցել ենք  
այդ հիւանդութիւնը:

Կարմրուկի նշանները: Հիւանդութիւնն  
սկսում է չոր հազով, հարբուխով և  
փոշտացնելով, աչքերը կարմրում են,  
ցաւում և ծակծկում, արտասուք է գա-

լիս. Հիւանդին գողացնում է և տա-  
քացնում, որը տեսում է երեք օր, չորս-  
հինգ օրից յետոյ դուրս է տալիս արդէն  
կարմրուկը, որը ամէնից առաջ երեսում  
է երեսին և յետոյ վզին ու կրծքին,  
կարմրուկի բժերը շատ նման են լուի  
կծածներին:

Կարմրուկի դուրս տալը տեսում է ե-  
րեք-չորս օր, յետոյ կարմրուկի տեղերը  
դեղնում են. երբ կարմրուկի համնելը վեր-  
ջանում է, ջերմը և հարբուխը սաստ-  
կանում են, կոկորդը ցաւում է, աչքերից  
ջուր է հոսում և հիւանդը չի կարողա-  
նում լուսին նայել փորը լուծում է և  
ախորժակը բոլովին կոլցնում: Կարմ-  
րուկի դուրս տալու առաջին օրից ուժ  
օր անցած՝ կարմրուկի տեղերը սկսած  
երեսից թեփի պէս թափւում են: Այդ  
ժամանակ հիւանդը համարեա բոլովո-  
վին առողջ է, բայց յաւ է էլի մի քանի  
օր տանը մնալը: Կարմրուկի թեփի պէս  
թափւուելու ժամանակ՝ մարմինը քոր է  
գալիս: Կարմրուկով հիւանդը առող-  
ջանում է երեք-չորս շաբաթից յետոյ,  
բայց դժբաղդաբար՝ միշտ այսպէս չէ

լինում։ պատահումէ երբեմն, որ ջերմը  
խիստ սաստկանումէ և տեսումէ եր-  
կար։ Պատահումէ երբեմն և կարմրուկի  
սարսափելի տեսակը, որ կոչումէ «  
կարծուկ»։

Կարմրուկի ժամանակ կարող են պա-  
տահել և ուրիշ հիւանդութիւններ,  
օրինակ՝ թոքերի բորբոքում։ այդ ժա-  
մանակ հիւանդի կողքը ծակումէ այն-  
պէս՝ որ նա հազիւե կարողանում շունչ  
քաշել հազի ժամանակ թափումէ ժանդի  
գոյն խորխ, հիւանդին դողաց-  
նում-տաքացնումէ և հեացնումէ,  
նա բոլորովին թուլանումէ։ Մինչեւ  
անգամ պատահումէ, որ հիւանդի ա-  
կանջներում թշթշումէ և յետոյ նա  
բոլորովին խանումէ կամ ականջներից  
սկսումէ արիւն հոսալ և եթէ հիւան-  
դը չըլաւանայ, այն ժամանակ հիւան-  
դութիւնը կարողէ գլուխն անցնել և  
հիւանդը մեռնել։ Չատ անգամ կարմր-  
ուկի ժամանակ պատահումէ փորլու-  
ծութիւն, որ նման է նքոցի (արիւն է  
փորլուծում), ինչպէս և խօլերայի ժա-  
մանակ։

Կարմրուկը կարելի է խառնել քութէ-  
շի հետ։

Ինչպէս վերևն ասացի՝ կարմրուկի  
ժամանակ հիւանդը չի կարում լրւսին  
նայել աչքերը կարմրում են, որոնցից  
և արտասուք է գալիս, հարբուխ է բըռ-  
նում, հազումէ, ցաւումէ բուզը, գո-  
ղացնում-տաքացնում է։ այդ բուզը  
ունենումէ և քութէշով հիւանդը բայց  
շատ թոյլ կերպով բացի սրանից՝ կարմր-  
ուկը ամենից առաջ դուրս է տալիս  
երկսին, իսկ քութէշը առաջ կրծքի և  
ապա երկսի վրա։ Քութէշը բերանի և  
քթի մօտ համարեա չի դուրս տալիս  
և նրա բծերը լինում են փոքրիկ, բուզը  
սկզբից սաստիկ ցաւումէ ինչպէս դիֆ-  
տերիտի ժամանակ, բացի սրանից՝ կարմր-  
ուկի ժամանակ եթէ հիւանդի բուզը  
ցաւումէ, այդ լինումէ ոչ սկզբից, վեր-  
ջապէս՝ քութէշով հիւանդի լեզուն ուռ-  
շումէ և մորի (մալինա) գոյն է բըռ-  
նում, իսկ կարմրուկով հիւանդին այդ-  
պիսի բան չէ պատահում։

Եթէ միաժամանակ տարածուած է  
կարմրուկը և քութէշը, հենց սկզբից ո-

լողելու համար հիւանդութիւնը, պէտք  
է տեսնել հիւանդը փսխում է (սիրտը  
թափում է) թէ չէ, եթէ փսխում է,  
ուրեմն հիւանդը քութէշ կունենայ, ե-  
թէ չի փսխում՝ կարմրուկ կունենայ:

Եթէ տարածուածէ ծաղկն ու կարմ-  
րուկը միաժամանակ պէտք է որոշել այս-  
պէս. ծաղկի բծերը մէջ տեղը փոս ըն-  
կած են լինում ու լցրած թարախով  
և հիւանդի մէջքը սաստիկ ցաւում է,  
իսկ կարմրուկի բծերը թարախ չեն  
բռնում հիւանդի մէջքն էլ չի ցա-  
ւում:

Խնչպէս պէտք է բժշկել կարմրուկ ունե-  
ցող հիւանդին: Եթէ կարմրուկը կանոնա-  
ւոր (թեթև) կերպովէ անցնում, այն ժա-  
մանակ համարեա բժշկել հարկաւոր չէ, ո-  
րովհետեւ ինքն իրան է անցնում, այլ մի-  
այն հիւանդին պէտք է խնամել: Որով-  
հետեւ կարմրուկով հիւանդի աչքերը  
ցաւում են, արտասուք է գալիս և լու-  
սին չի կարում նայելը սրա համար հար-  
կաւոր է սենեակը փոքր ինչ մթնացնել  
այսինքն՝ լուսամուտներին վարագոյք  
քաշել: Անեակի օղը պէտք է մաքուր

լինի, դրա համար լաւ է գոնէ օրը մէկ  
անգամ սենեակի օղը փոխել:

Անեակի օղը շատ տաք պիտի չը լի-  
նի և ոչ էլ չոր, դրա համար լաւ է վառա-  
րանը տաքացնելու ժամանակ վրան դնել  
մի ամանով ջուր: Հիւանդին պէտք է  
ուտեցնել ջրալի, հշշա մարսուոր կերա-  
կուրներ, օրինակ՝ մսաջուր (բուլիօն),  
կաթ (ծիծ ուտող կրիխային ծիծը մայ-  
րը պէտք է տայ), մախոխ կարելի է տալ  
նոյնպէս բաց թէյ, ու եթէ փորը կա-  
պած է մէկ գգալ գենագերչակի ձէթ:

Որովհետեւ կարմրուկը վարակիչ է՝  
դրա համար ի հարկէ հարկաւոր է հի-  
ւանդ երեխային առանձին սենեակում  
պահել որ ուրիշները չը վարակուին, և  
նրա արտաթորութիւնի (դուրս գնա-  
ցածը) վրա, ողը առանձին ամանում  
պիտի լինի, կարբօղկա ածել: Եթէ աչ-  
քերը սաստիկ են ցաւում և արտասուք է  
գալիս, պէտքէ վերցնել երկու կառը շատ  
մաքուր քաթան, թրջել սառը ջրի մէջ  
և փոխփոխելով դնել աչքերին, իւրաքան-  
չեւրը թողնել մի-երկու բոպէ: Եթէ  
հիւանդը շատ տաքութիւն ունի, պէտք

է տալ քինաքինա (այնպէս, ինչպէս վերևն ասել եմ): Եթէ հիւանդի քթից արիւն է գալիս, պէտք է նա քթով սառը ջուր ներս քաշի, եթէ մէնակ ջուրը չէ օգնում, այն ժամանակ մի բաժակ ջրի հետ խառնել մէկ թէյի գդալ քացախ, կամ շեր:

Եթէ հիւանդը շատ հազում է՝ պէտք է այսպիսի դեղ շնել վերցնել մէկ քառորդ գրվանքա տուղտի արմատ, տասը մսխալ մատիտակի արմատ և վեց մսխալ անխօնի սերմ: Այս բոլորը լաւ խառնել և առնել սրանից երկու թէյի գդալ ածել թէյամանում (չայնիկ) և թէյի պէս խմել: Շատ լաւ է կուրծքը քսել խոզի խտակ ճրագուռվ. լաւ է մինչեւ անգամ ամբողջ մարմինը քսել, որովհետեւ ճրագուն փոքրացնում է քոր գալը և տաքութիւնը:

### Ե. Վա-Աւ.

Քութէշը յայտնի էր մարդկանց երկու հարիւր տարի առաջ. նա սաստիկ վարակիչ հիւանդութիւն է. նրա վարակիչ թոյնը կարելի է գտնել արեան, ար-

տասուքի, մեզի, արտաթորութիւնի և մինչեւ անգամ շնչառութիւնի մէջ: Եթէ մէկը լինում է քութէշով հիւանդի սենեակի մէջ, նա կարող է վարակուել նրանից կամ մինչեւ անգամ քութէշը իր հետ բերելով՝ վարակել ուրիշն: Դրա համար հարկաւոր է զբյշ լինել, որովհետեւ գա հասարակ բան չէ, այլ մի վտանգաւոր հիւանդութիւն: Եյդ հիւանդութիւնը ինքն իրան չէ սկըսուում, այլ միշտ վարակուելուց: Ուրդ կարող է վարակուել ամէն բանից, որին հիւանդը դիպել է, շորերից, գդալից, բաժակից, հիւանդի շնչեց և այն: Քութէշը կարող է մինչեւ անգամ երկար ժամանակ ծածուկ մնալ և յետոյ անցնել առողջ մարդու վրա: Եյս պատճառով՝ քութէշը վերջանալուց յետոյ, պէտք է հիւանդի շորերը, սենեակը և ամէն բան լաւ մաքրել (մաքրելու մասին կրխօսեմ զրքի վերջում):

Թէպէտ քութէշը ամէնից աւելի ընկնում է երեսաներին, բայց նրանով կարող են վարակուել և մեծերը: Եյն բնակարաններում, որտեղ կենում է խիտ

բազմութիւն, օրինակ՝ գիշերօթիկ ու-  
սումնարաններում երկար ժամանակէ  
տևում քութէշը և հեշտութիւնով էլ  
տարածւում:

Ո՞ւ անգամ քութէշը ընկնողը հա-  
մարեա երկրորդ անգամ չի ընկնում,  
բայց կարող է պատահել որ մարդ եր-  
կու անգամ իր կեանքում քութէշով  
վարակուի: Քութէշը սաստիկ տարած-  
ւումէ աշնանը:

Քութէշի նշանները: Քութէշը մի  
չորս-վեց օր ընկնելուց յետոյ գաղտնի է  
մոռւմ: Այդ ժամանակ վարակուածը  
վլսաւորապէս իրան թոյլէ զգում, շու-  
տով յոդնումէ, ախորժակը կորցնում  
է: Այդ գաղտնի ժամանակից յետոյ  
սկսւումէ սաստիկ գողացնելստաքաց-  
նելը, հիւանդի մարմինը սաստիկ տաք  
է լինում և բողազում քորէ գալիս,  
յետոյ բողազը ուռչումէ ու ցաւում,  
այնպէս որ հիւանդը դժուարանում  
է կուլ տալ ծնօտի տակի խուլերը  
ուռչումէն, որոնք մատով սղմելու կամ  
բերանը բաց անելու ժամանակ ցա-  
ւումէն: Եթէ հիւանդը բերանը բաց

անի, կարելի է տեսնել որ բողազը  
ներսից կարմրածէ և նշանման խու-  
լերն ուռում: Պատահումէ, որ հիւանդի  
փորը կամ կապուածէ լինում, կամ  
լուծումէ, սրտի գգալի տակը ցաւում  
է: Այդ ժամանակ հիւանդը սիրտը թա-  
փումէ (փսխումէ), և ցնցւում: Քու-  
թէշը առաջ դուրս է տալիս կրծքի, վզի  
և մէկ օրից յետոյ բոլոր մարմնի վրա:  
Քութէշը երեսի վրա այնքան նշա-  
րելի չի լինում, իսկ բերանի և քմիթ մօտ  
համարեա բոլորովին չի լինում: Քու-  
թէշը դուրս է տալիս փոքրիկ և կար-  
միր բծերով, այդ բծերը այնքան իրար  
մօտիկ են լինում, որ մարմինը հիւուից  
բոլորովին կարմիր է երեսում: Ի՞ծերի  
շուրջը կաշին փոքր ինչ սպիտակէ լի-  
նում: Նրանց վրայ նստած են մուգ-կար-  
միր կէտեր: Մորթը տեղ-տեղ ուռչում  
է և ջուր է գողանում: Քութէշը լաւ  
կարելի է նկատել նրա գուրս տալու  
երրորդ օրը, կարմրութիւնը բողազի  
մէջ սաստիկանումէ, կուլ տալը աւելի  
գժուարանումէ, գողն ու տաքութիւնը  
նոյնպէս աւելանումէն, լեզուն ուռչում

է և նրա ծայրն ու կողքերը ծածկւում  
են մոխրագուն փառով որը շուտով  
անցնում է և տեղը մնում էն կարմիր կէ-  
տեր, այնպէս որ լեզուն նմանում է կար-  
միր մոլի (մալինայի): Այդպիսի լեզուն  
կոչում է +\*Բէլլէ լէպո\*: Բայցի դո-  
րանից՝ հիւանդի գլուխը սաստիկ ցա-  
ւում է, շատ անդամ ինքն իրան խօ-  
սում է հիւանդը, ախորժակը բոլորո-  
վին կորցնում է և սրտով ջուր է ու-  
զում խմել միզում է (շուում է) շատ  
սակաւ: Քութէշի դուրս տալուց չորս  
հինգ օր յետոյ՝ նա սկսում է վեր թա-  
փուել թեփի պէս կտոր-կտոր, երբեմնա-  
պէս բաւականին մեծ կտորներով. ի  
հարկ է թեփի թափուելը սկսում է այն  
տեղեց, որտեղից նա սկսել է դուրս տալ:  
Քութէշի թափուելու ժամանակ հիւան-  
դը չի ջերմում և իրան լաւ է զգում:  
Բայց դժբաղբաբար՝ քութէշը միշտ  
այսպէս հեշտ չէ անցնում, պատահում  
է, որ քութէշից հիւանդի երեսը, ձեռ-  
քերը և գլխաւորապէս ոտքերը բոլո-  
րովին ուռչում են: Մեղը շատ սակաւ  
է և մուգ գունով է գալիս և նրա մէջ

շատ անդամ խառն է լինում արիւն:  
Քութէշին շատ անդամ աւելանում է  
զիֆաերիտ, որի մասին արգէն խօսել եմ:  
Խնչպէս պէտք է բժշկել քութէշը: Ա-  
մէնից առաջ հիւանդին անպատճառ  
առանձնացնել առողջներից, որովհետեւ  
քութէշը հեշտ հիւանդութիւն չէ, այլ  
սաստիկ վարակիչ և դիպոզ կերակրի  
ամանը առանձին պէտք է լինի, հիւանդը  
պիտի դուրս գնայ նոյնպէս առանձին ա-  
մանում, որի մէջ առաջուց պէտք է ածել  
կարբօլկա, նաւթ կամ կիր (քիրաջ):  
Տաքութիւնի գէմ պէտք է տալ քինա-  
քինա ինչպէս զիֆաերիտի ժամանակի:  
Խթէ հիւանդը շատ ուզում է խմել  
լաւ է տալ նրան թթու բան, կիտրօն,  
ալիբուխարի, թթու նուռը և այլն:  
Խթէ տեսնէք որ հիւանդը հետզհետէ  
թուլանում է, լաւ է տալ գինի՝ մէկ  
թէյի գդալով օրը հինգ-վեց անդամ:  
Խթէ հիւանդը ինքն իրան խօսում է՝  
զիլին պէտք է զնել սառը ջրում թըր-  
ջած քաթան և մէկ-երկու բոպէից փո-  
խել, կամ եղան փամփուշտով սառուց  
դնել, լաւ կըլինի եթէ հիւանդի մար-

մինը քութէշի թափուելու ժամանակ քսուի խողի խտակ ճրագուով։ Իզի ուռուցքը և ցաւը հեռացնելու համար, հարկաւոր է եփել փոքր ինչ կտաւատի սերմ կաթի մէջ ու մի կտոր շորով դնել բգի վերայ և փաթաթել թաշկինակով և այսպիսով փոխել օրը երկու անգամ, կամ թրջել քաթանը սառը ջրի մէջ, յետոյ լաւ սխմել և դրանով փաթաթել բուզը, այդ թաց քաթանի վրա դնել մոմած քաթան, սրա վրան էլ դնել մի բրդի շոր, և ապա սրանով բոզազը կապել (թաց քաթանից մեծ պէտք է լինի մոմածը, մոմածից էլ մեծ՝ բրդէ շորը). այս պէտք է օրը երեք-չորս անգամ փոխել. Որովհետեւ քութէշի ժամանակ հիւանդի բուզն ուռուցում է, կարմրում ու ցաւում, զրա համար բերանը պէտք է ողողել օրը ութը-տասն անգամ հիւանեալ դեղով. մի թէյնոցում (չայնիկ) ջրի հետ եփ տալ երկու թէյի գրալ շալֆէյ և ամէն մի այսպիսի բաժակում խառնել մէկ դրալ բերանուտի աղ և լաւ խառնել որ հալուի. բերանուտի աղի աղի տեղ կարելի է դորձածել բո-

րակ (ծորա) կամ շեր և մինչեւ անգամ հասարակ տանու ազ: Եթէ երեխան շատ փոքր է և չի կարող ինքը ողողել բուզը, այն ժամանակ կարմրած և ուռած տեղերին լաւ է օրը մի քանի անգամ հիւանեալ դեղը փետուրով քսել: Վերցնել մէկ մսխալ ծեծած շեր, հալել չորս սեղանի (սպասի) գդալ ջրի մէջ, վրան աւելացնել երկու սեղանի գդալ զլեցերին կամ արդար իւղ. այս բոլորը լաւ խառնել և օրը չորս անգամ բողազին քսել: Եթէ քութէշի ժամանակ հիւանդին աւելանայ դիֆտերիտը, այդ էլ պէտք է բժշկել այնպէս, ինչպէս ասել եմ վերել դիֆտերիտը բժշկելու համար:

Օ. Արք-հայտառն իորլո-ծո-նի-ն կամ նոնց:

Նկոցը, կամ ինչպէս լատիներէն ասում են՝ դիզնտէրիա, յայտնի էր և հին ժամանակները. նա սկսում է դողով և տաքութիւնով, սաստիկ նքայնելով, հիւանդը դուրս է դնում շուտ-շուտ, մինչեւ անգամ օրը 80—100 անգամ, արտաթորութիւնը լինում է փոքր քանա-

քութիւնով և արիւնախառն, հիւտնդը  
զգում է սաստիկ փորացաւ և աղեքների  
կտրտոց, եթէ հիւանդութիւնն երկար է  
տևում՝ արտաթորութիւնի հետիսառն է  
լինում և թարախ. այդ արտաթորու-  
թիւնը վատ հոտ է ունենում. հիւանդը  
թուլանում է, նիշարում, կապտում և  
մինչև անդամկարող է մեռնել. այս հիւան-  
դութիւնը փոխազլուող վարակիչ է: Առ-  
հասարակ միշտ պէտք է զգուշանալ չը  
պառկելնեղ մութուխոնաւսնեակում,  
զգուշանալ թունաւոր բաներ ուտելուց  
կամ խմելուց, նոյնպէս խակ մրգերից  
այլն:

Ի՞ժկելու միջոցներ: Հիւանդին պէտք  
է առանձնացնել, որ առողջները չըվա-  
րակուին: Հիւանդի արտաթորութիւնի  
վրա ածել կարբօլիա կամ կրածուր: Այս-  
պիսի հիւանդին պէտք է տալ անպատ-  
ճառ լուծողական, փոքր երեխաներին  
մէկ երկու թէյի գդալ շնաձանձի (գե-  
նագերչակի) ձէթ, իսկ մէծերին մի սե-  
ղանի գդալով: Կատ լաւ կրկինի, եթէ  
հիւանդը առաջի երկու-երեք օրը ոչ-  
ինչ չուտէ, բայց եթէ շատ թոյլ է և

փորը սաստիկ է ցաւում, այն ժամանակ  
լաւ է հիւանդին տալ խմելու տուղտի  
ջուր, կամ սովորական թէյ միքիչ կօնեա-  
կով կամ ումով, երեք-չորս օրից յետոյ  
հիւանդին կարելի է ուտացնել լաւ ե-  
փած բրնձի շօրվա, բայց հաց, միս և  
ուրիշ կոշտ կերակուրներ չըպէտք է տալ.  
Հիւանդը որքան անօթի մնայ, այնքան  
շուտով կ'առողջանայ: Փոքր երեխանե-  
րի փորը լաւ է փաթաթել չոր բրդե-  
ղէն շորերով: Այէկ շաբաթից յետոյ  
հիւանդին կամաց-կամաց կարելի է տալ  
եփած կաթ, մսածուր (բուլիօն), թեր-  
խաշ ձու և այլն:

### Բ. Խօնքնա.

Խօներան մի զարհուրելի վարակիչ  
հիւանդութիւն է, որ ժամանակ-ժոմա-  
նակ երեկով անթիւ զոհերէ տանում: Այս սարսափելի հիւանդութեան նշան-  
ները սոքա են—փսխում և լուծում  
և սորանից յետոյ սկսում է մկա-  
նունքների կծկումն, կծկումից յետոյ  
առաջ են գալիս մարմնի սառելն ու կապ-  
տելն: Այս հիւանդութիւնով վարակ-

ւումեն շատ խմիչքեղէն՝ նդյնպէս չափազանց մրգեղէն, մանաւանդ խակ պտուղներ, ինչպէս վարունդ (խիար), սունկ և սրանց նման մանր և դժուարամարս բաներ գործածողներ և այլն: Խօլերաի մասին բաւական է այսքան խօսել որովհետեւ արդէն կայ մի գեղեցիկ զիրք հայերէն լեզուով, որ խորհուրդ կըտանք մեր ընթնրցողներին գնել \*):

Ը. Թառախոս (Հայուսուկա).

Բարակացաւը—թոքախտը զլիսաւորապէս կուրծքի հիւանդութիւն է: Թառքախտի յայտնի նշանները—անընդհատ հազ արիւն թքելը, գիշելներով շատ քրտնելը, կրինուող տենդն ու հետզհտէ ուժասպառ լինելն է և այլն: Այս սարսափեյի հիւանդութիւնը սաստիկ տարածուած է, այնպէս որ մահուան բոլոր դէպքերից մօտաւորապէս մի եօթերորդ մասն ընկնում է բարակացաւ թո-

\*) Խօլերա և նրա առաջն առնելու միջոցներ, բժշկ. Գ. Տէր-Գրիգորեանց (Թիֆլիզեցու). գինը 5 կօպ. է:

քախտին: ‘Խա չի խնայում ոչ սեռ, ոչ հասակ, ոչ հարուստ և ոչ աղքատ: Տարածուելու զլիսաւոր պատճառը նրա տարափոխիկ (վարակիչ) լինելն է: Եթէ թոքերի բարակացաւոտ մասից վերցնենք և պատուաստնք կինդանիներին, այս վերջինները հիւանդանում են թոքախտով այսինքն՝ ընդհանուր բարակացաւով: Այսպիսով յայտնի եղաւ թոքախտի վարակիչ լինելու միտքը և այս փաստը անկասկած մնաց, երբ 1882 թւին երևելի գիտնական Պօեկրտ Պօխը գտաւ թոքախտի բուն պատճառը, այն է գծաձև որդունքները (Ճիճուները), կամ ինչպէս ասում են բացիները, որոնց կարելի է տեսնել միայն մանրադիտակի (միկրոսկոպ) տակ, այսինքն՝ մեծացնելով մի քանի հարիւր անդամ: Այդ բացիները այսպէս կարելի է երևակայել. եթէ առնենք մօտաւորապէս հարիւր բացիլ, նորանց կարելի է մէկ կէտի մէջ շարել իրար ետելից: Բազմաթիւ փորձերից յետոյ յայտնի եղաւ, որ այդ բացիները բուն պատճառը կամ իսկական թոքախտի թօննն են: Այդ բացիները կարելի է զբա-

Նել բարակացաւ ունեցող հիւանդի խոր-  
խի և միւս արտաթորութիւնների մէջ.  
այս էլ պէտք է ասել որ խորխի թու-  
նաւոր յատկութիւնը չի ոչնչանումնոյն  
խոկ նորա ցամաքելուց յետոյ:

Մարդիկ մեծ մասամբ վարակւում  
են թոքախտով՝ ցամաքած խորխի փո-  
շին ներշնչելով, — ահա մի օրինակ. եր-  
կու ընկեր ապրում էին մէկ սենեակի  
մէջ, մէկը հիւանդ էր թոքախտով իսկ  
միւսը բոլորովին առողջ էր, նրա ըն-  
տանիքում ոչ ոք թոքախտով հիւանդ  
չէր եղել, ուժն ամսից յետոյ առողջ  
ընկերն էլ թոքախտ ստացաւ: “Նոյն-  
պէս կարելի է վարակուել մորթու կամ  
արտաքին վէրքերի միջոցով, — ահա օրի-  
նակ. մի առողջ աղախին մատը կըտ-  
րեց այն ամանով, որի մէջ խորխում  
էր նորաբարակացաւոտ պարոնը և ինքն  
էլ հիւանդացաւ թոքախտով...” Ահա  
այսպիսով տեսնում ենք, որ թոքախտը  
շատ վարակիչ հիւանդութիւն է. հաս-  
կանալիք բան է, որ թոյլ կամ հիւանդու  
մարդիկ չեն կարողանում դիմագրել այդ  
սարսափելի թոյնին: Դիմաւոր գեր խա-

զում է նախատրամադրութիւնը դէպի  
թոքախտը և որ թոքախտը ժառան-  
գական է՝ այդ արդէն ստուգուած է:

Իժշկելու միջոցներ: Թոքախտը լի-  
նում է մի քանի տեսակ ու թոքախ-  
տով հիւանդը կարող է ապրել մի քա-  
նի տարի. թոքախտի զլսաւոր գեղը  
այն է, որ հիւանդը ծծէ մաքուր և  
թարմ օդ, բնակարանը չըլինի մութ և  
խոնաւ, կերակուրը լինի սննդարար, ինչ-  
պէս միս, կարաք, քումիս քէֆիր, ձու,  
կաթ, և այլն: Այս վերջի ժամանակ-  
ները յայտնի Աօխը, որը գտաւ թոքախ-  
տի խակական թոյնը, այսինքն բացիլ-  
ները, առաջարկեց մի բժշկական մի-  
ջոց թոքախտի դէմ և եթէ այդ մի-  
ջոցը հաստատուի, այն ժամանակ Աօխը  
կըկոչուի բոլոր մարդկութեան բարեկար:

Առ ժամանակ, սիրելի ընթերցող ա-  
հա մի քանի միջոցներ բարակացաւի  
տարածման առաջն առնելու համար:

1) Լաւ առողջարար կերակուր, օդ  
և ջուր, նոյնպէս հողեկան հանգստու-  
թին: 2) Եթէ հաստատ յայտնի չէ,  
որ կովն առողջ է, այն ժամանակ կաթը

լաւ եփել նոյնպէս չուտել կհսահի միս,  
հում խորոված (շիշեկ) և այլն: 3)  
Հիւանդի շորերը քրհագնել կամ, եթէ  
չե կարելի, թողնել այդ շորերը 3—5  
ժամ սաստիկ տաք ջրի մէջ և յետոյ  
վրան ածել կարբօլկա: 4) Պահանջել  
որ բոլոր հազարողները թքեն առհա-  
սարակ միայն ջուր ածած ամանների  
մէջ:

**Թ. Վաղակնան ուն մէջոցներ.**

Պէտք է երեք չըմոռանալ, որ վա-  
րակիչ հիւանդութիւնների ժամանակ՝  
անմաքրութիւնը, կեղտոտութիւնը բե-  
րում է բազմաթիւ վտանգներ, որքան  
անմաքրութիւնը շատ է մարդու շուր-  
ջը, այնքան կատաղի և սարսափելի կեր-  
պով երկար է տեսում վարակող թոյնը,  
այնտեղ են շատ հեշտ կերպով արմա-  
տանում վարակիչ հիւանդութիւնները  
և այնտեղ է թուլանում նրանց հեռաց-  
նելու ու ոչնչացնելու զէնքերը: Վարա-  
կիչ հիւանդութիւնների միմայն գեղե-  
րով բժշկելը քիչ օգուտ կըրերէ, եթէ  
այդ դէպքում չըհացուի հիւանդին:

մաքրութեան և առանձնայնելու վրա:  
Երբ ես խօսում էի քութէշե, ծաղկի, և  
այլ հիւանդութիւնների մասին, միշտ ա-  
սում էի, որ այդպիսի վարակուած հի-  
ւանդներին անպատճառ հարկաւոր է ա-  
ռանձնացնել առողջներից, ասում էի, որ  
հիւանդի առողջանալուց յետոյ չե կարե-  
լի առողջներին իսկոյն մոնել նրա բնակա-  
րանը, որ հիւանդի գործածած իրերը,  
շորերը և այլն չե կարելի խառնել ա-  
ռողջների իրերի հետ: Հիմա կը կնում  
եմ, որ այդ կանոնները պիտի լինին  
ձեղ օրէնք, եթէ ուզում էք, որ ձեր  
եղայրները, քոյրերը առողջ մնան. այդ  
այնպէս դժուար բան չէ, և կը համո-  
զուիք, որ խրատներս կատարելը հազա-  
րապատիկ աւելի օգտակար է, քան մին-  
չե ականջները ցեխի ու անմաքրութեան  
մէջ նստելը.— Ի՞նչ օգուտ, որ մի հիւանդ  
կ'առողջանայ, բայց ձեր անզգուշութիւ-  
նից և կեղաստութիւնից քսաներեսուն  
մարդ նրա տեղ կը հիւանդանայ, կը վա-  
րակուի, այդ քիչ է, մինչեւ անդամ եթէ  
իրան հիւանդին լաւ չընայէք, չըպահէք  
մաքուր և չ'առանձնացնէք, այն ժա-

մանակ հիւանդութիւնը երկարէ տեսում, դժուարանումէ, շատ անգամ բոլորովին չի անցնում և նրա տեղ առաջանում են և ուրիշ հիւանդութիւններ, Եյս ձեզ համար օրէնք պիտի լինի, որ առողջի համար ըսդիւանդանալը աւելի լաւէ, և հեշտ քան թէ հիւանդին առողջացնելը:

Ահա մի քանի կանոններ.

1) Եյն բնակարանում, որտեղ պառկած է հիւանդը, ոչինչ աւելի մի այնպիտի բան չը պէտք է թողնել որ պէտք է զալիս առողջներին:

2) Եյն սպիտակեղենը, որը հագնումէ կամ գործ է ածում հիւանդը, չի կարելի իսկոյն դուրս տանել սենեակից, այլ պէտք է ածել բաւականին աղի ջրի մէջ և ապա դուրս տանել սենեակից և տալ լոււանալու, բացի դուրանից՝ այդ շորերը պէտք է լոււանալ առանձին և լոււանալուց ել առաջ գնել սաստիկ եփ տուած ջրի մէջ:

3) Եյն ամանը, որից հիւանդը ուտումէ կամ խմում, պէտք է լինի ա-

մանձին և այդ ամանը ոչ մէկ առողջ մարդ չըպէտք է գործածէ:

4) Հիւանդի արտաթորութիւնի (դուրս գնացածի) համար առանձին աման է հարկաւոր, որտեղ պէտք է ածել կարիօլիս կամ կրաջուր (քիրաջի ջուր): Եյդ ամանը երկար չըպէտք է թողնել հիւանդի մօտ, այլ ամէն մի նրա արտաթորելուց յետոյ տանել դուրս և ածել բնակարաններից հեռու՝ գեանի մէջ փորած մի փոս. արտաթորութիւնի վերեկց էլ պէտք է ածել կիր կամ նաւթ:

5) Եյն սենեակի օդը, որի մէջ պառկած է հիւանդը, պէտք է փոխել օքը երկը-չորս անգամ: Սենեակի օդը կարելի է փոխել պատուհանները բանալով, բայց պէտք է այնպէս անել որ հիւանդը պէտք ժամանակ պառկած չըլինի պատուհանի մօտ, բացի գորանից՝ չի կարելի դուռը և պատուհանները միաժամանակ բանալ և պէտք է աշխատել պատուհանների բաց անելու ժամանակ կախ տալ նրանց վրայից վարագրյաներ:

6) Հիւանդին մտիկ տուողը (հո

գացողը) իրաւունք չունի հիւանդից իս-  
կըն առողջի մօտ զնալ որովհետեւ նա  
կարող է իր հետ վարակող թղնը տա-  
նել և վարակել այսպիսով առողջ մարդ-  
կանց. լաւ է, որ այդ հիւանդի մօտ նըս-  
տողը բոլորովին յարաբերութիւն չու-  
նենայ առողջների հետ. բայց եթէ այդ  
չի կարելի, այն ժամանակ նա պէտք է  
լաւ լուանայ երեսն ու ձեռքերը, հագնի  
նոր իստակ շորեր և ապա մօտենայ ա-  
ռողջներին:

7) Հիւանդի առողջանալուց յետոյ՝  
չի կարելի առողջներին իսկոյն նրա սե-  
նեակը մտնել այլ պէտք է առաջուց  
սենեակի օղը բոլորովին փոխել քամու-  
տալ այսինքն՝ բաց անել բոլոր պատու-  
հաններն ու դռները մի ամբողջ շա-  
բաթ, և ապա նոյն սենեակը ծխել  
ծծումբով (քուքուրդով) այսպէս, սե-  
նեակի դռները, պատուհանները և ա-  
մեն մի ծակուծուկ պէտք է փակել ա-  
պա սենեակում դնել մանղալով կամ  
այլ ամանով կրակ, կրակի մէջ ածել  
ծծումբը. ծծումբի վառուելով՝ բարձ-  
րանում է մի խեղող գազ գոլորշե,

որը ոչնչացնում է սենեակի վարակող  
թղնը. ծծումբի ծխուելու ժամանակ  
լաւ կըլինի սենեակում դնել և մի  
աման եփ տուած ջրով, որպէս զի  
սենեակը փոքր ինչ խոնաւանայ (խո-  
նաւ օդում ծծումբը աւելի լաւ է ծը-  
խուում), բացի սրանից՝ սենեակից պէտք  
է հեռացնել մետաղէ բոլոր առարկա-  
ները որ չըսկեանան և բոլոր շնչաւոր  
կենդանիներին, որովհետեւ ծծումբի ծու-  
խը վնասակար է, նրանից կարող է մարդ  
հաղալ և մինչև անգամ հազի հետ  
թքել արիւն։ Երկու օր այսպէս ծխե-  
լուց յետոյ՝ սենեակի դռներն ու պա-  
տուհանները պէտք է բանալ և ամբողջ  
սենեակը մինչև անգամ պատերը լաւ  
լուանալ աղաջրով։ Այս բոլորը կատա-  
րելուց յետոյ՝ այդ սենեակում կարող են  
բնակուել և առողջ մարդիկ։

8) Հիւանդի գործածած բոլոր շո-  
րերն ու սպիտակեղինները պէտք է  
անպատճառ այրել իսկ այն շորերը,  
որոնք շատ նոր են և խնայում են այ-  
րել, պէտք է եփ տալ տաք ջրի մէջ և  
\*

այդ ջրի մէջ պէտք է դնել մի կտոր  
շեր կամ աղ և ապա հաղնել:

9) Նիւանդի գործ ածած ամաննելը  
պէտք է մի քանի անգամ լսւ լուս-  
նալ եփ տուած ջրի մէջ և ապա գոր-  
ծածել:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան . . . . .	3
Ա. Բգացաւ (զիթաերիտ) . . . . .	5
Բ. Ծաղիկ . . . . .	14
Գ. Էնչնշանակում Ճաղիկարելը . .	18
Դ. Կարմրուկ . . . . .	23
Ե. Քութէշ . . . . .	32
Զ. Արիւնախառն փորլուծութիւն կամ նքոց . . . . .	39
Լ. Խօլիրա . . . . .	41
Ռ. Թաղախտ (չախօտկա) . . . . .	42
Տ. Վարակման գէմ միջոցներ . .	46

3210

2013

«Ազգային գրադարան



NL0074774

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

- 1) Առաջին օգտակար միջոցներ յանկարձակի հիւանդութեան և փորձանկքի ժամանակ՝ զինը 5 կոպ. (սպառուած է):
- 3) Խոչէ սիմիլեոր (տպւում է):

Գինը քինգ կօգիկ է: